պատուել զաղքատ ազգն Ասորւոց 'ի բռնութենէ նոցին։ Եւ 'ի Դամասկոս զօրացեալ Պապականաց արկեալ էին 'ի բանտ զԵպիսկոպոսունս Ասորւոց, և յազգ առնել Պօղոսի Եպիսկոպոսի՝ գրեաց 'ի Կոստանդինուպոլիս վասն ազատութեան նոցին։ Ի հասանիլ այսոցիկ թղթոց, գրեաց և ինքն Ստեփաննոս Պատրիարք և յայտ արար զխնդիրս 'ի Դուռն եղեալ 'ի նմին եւ զաղերսագիրն Կաթուղիկոսին Ասորւոց, եւ էառ նոր հրովարտակ վասն ազատութեան նոցին։

Ճարակումն Ժանտախտին 'ի Կոստանդինուպոլիս և 'ի սահմանս նորա։

Զայսու ժամանակաւ անկեալ էր Երուսաղէմ ընդ իշխանութեամբ Եգիպտական Կառավարութեան, ուստի զառաջին հրովարտակն չինութեան Համբարձման տեղւոյն առաքեցաւ առ Փոխ Արքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի Փաշայ, և նա յետ վաւերելոյ զայն՝ գրեաց և ինքն հրաման առ Դատաւորս Երուսաղէմի, զի անարգել գործադրեսցեն զհրամանն։ Ի հասանիլ թղթոյն եղեւ ժողով 'ի դատարանին Երուսաղէմի, ուր էին կղերք Հայոց, Յունաց և Լատինաց, և ընթերցան 'ի լուր ամենեցուն զհրովարտակն և զհրաման Փոխ Արքային, և հրաման ետուն Հայոց սկիզբն առնել չինութեան, և առեալ զփականս տեղւոյն 'ի ձեռաց Յունաց և Լատինաց և ետուն ցՀայս, և պատուիրեցին չհակառակիլ նոցա։ Իսկ Պօղոս Եպիսկոպոս կացոյց վերատեսուչ 'ի վերայ գործոյն զԳաղատացի Իսահակ վարդապետ Տ. Գրիգորեան, որ վարէր յայնժամ ընդպաշտօն Թարգմանութեան Աթոռոյն, եւ էր ինքն այր բանիբուն և ճարտար 'ի խօսս և սիրելի ամենեցուն։ Եւ նորա սկիզբն արարեալ չինութեան, նախ մաքուր քարամբք ետ յատակել զբովանդակ դաւիթ Համբարձման եկեղեցւոյն 'ի չրջապատս դմբեթին. ետ փորել ջրամբար մեծ 'ի կողմն հիւսիսոյ՝ որ և չինեալ աւարտեցին. նորոգեցին զհին փոքր ջրամբարն 'ի հարաւ, և զդմբեթն Համբարձման ներքոյ և արտաքոյ. ապա զարդարեցին ջահիւք և լապտերօք և ամենայն եկեղեցական սպասուք, կանգնեցին սեղան պատարագի 'ի վերայ չորից մարմարիոն սեանց, և եդին երկփեղկ դրունս ամուր փակաղակօք և